Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-261[1]-11.05.2022-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 43.1-ին հոդվածում՝

1) լրացնել նոր 1.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝

«1.1. Չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբարկղերից, աղբամաններից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս երեք խորանարդ մետր և ավելի աղբի կուտակումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:

2) 2-րդ մասում «Սույն հոդվածով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով» բառերով, իսկ «խախտում» բառը փոխարինել «խախտումներ» բառով,

3) 2.4-րդ մասում «Սույն հոդվածի 2.2-րդ մասով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 2.3-րդ մասով» բառերով,

4) 3-րդ մասի 3-րդ կետում «2-րդ» բառերը փոխարինել «3-րդ» բառերով,

5) լրացնել նոր 11.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝

«11.1. Սույն հոդվածի 1.1-ին և 3-7-րդ մասերով սահմանված իրավախախտումների հայտնաբերման համար որպես ապացույց կարող են կիրառվել նաև տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքավորումների միջոցով արձանագրված փաստերը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 219[1]-ին հոդվածում՝

1) 1-ին մասում «43.1-ին հոդվածի 1-ին, 9-րդ մասերով» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 1-ին, 1.1-ին, 2-րդ, 9-րդ մասերով» բառերով,

2) 2-րդ մասում «43.1-ին հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 2.1-8-րդ (3-րդ, 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված իրավախախտումները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով ՀՀ ոստիկանությանը) և 10-12-րդ մասերով» բառերով,

Հոդված 3. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «43.1-ին հոդվածի 7-րդ մասով» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 3-րդ, 4-րդ, 7-րդ (ՀՀ ոստիկանության կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին), 10-12-րդ մասերով» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Ընդ որում, սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 10-11-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է 43.1-ին հոդվածի 3-րդ, 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների մասով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 242-րդ հոդվածում «օրենսգրքի» բառից հետո լրացնել «43.2-րդ հոդվածով,» բառերով:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել նոր՝ 43.2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 43.2. Աղբավայրի մոնիթորինգի իրականացման կարգը խախտելը**

1. Աղբավայրը շահագործողների կողմից աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում անհատ ձեռնարկատերերի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ՝ օրենքի 5-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնելու 2024 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. ~~Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի~~ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 43.1-ին հոդվածում՝

6) լրացնել նոր 1.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝

«1.1. Չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբարկղերից, աղբամաններից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս երեք խորանարդ մետր և ավելի աղբի կուտակումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:

7) 2-րդ մասում «Սույն հոդվածով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով» բառերով, իսկ «խախտում» բառը փոխարինել «խախտումներ» բառով,

8) 2.4-րդ մասում «Սույն հոդվածի 2.2-րդ մասով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 2.3-րդ մասով» բառերով,

4) ~~3-րդ մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:~~ 3-րդ մասի 3-րդ կետում «2-րդ» բառերը փոխարինել «3-րդ» բառերով,

5) ~~լրացնել 3.1-ին մասով հետևյալ հետևյալ բովանդակությամբ՝~~

~~«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված վարչական իրավախախտումները բնակելի, հասարակական կամ այլ նշանակության շենքերից կամ այլ շինություններից կատարելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից հարյուրհինգապատիկի չափով:~~

~~6)~~ 5) լրացնել նոր 11.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝

«11.1. Սույն հոդվածի 1.1-ին և 3-7-րդ մասերով սահմանված իրավախախտումների հայտնաբերման համար որպես ապացույց կարող են կիրառվել նաև տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքավորումների միջոցով արձանագրված փաստերը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 219[1] -ին հոդվածում՝

1) 1-ին մասում «43.1-ին հոդվածի 1-ին, 9-րդ մասերով» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 1-ին, 1.1-ին, 2-րդ, 9-րդ մասերով» բառերով,

2) 2-րդ մասում «43.1-ին հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 2.1-8-րդ (3-րդ, 3.1-ին, 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված իրավախախտումները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով ՀՀ ոստիկանությանը) և 10-12-րդ մասերով» բառերով,

Հոդված 3. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «43.1-ին հոդվածի 7-րդ մասով» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 3-րդ, 3.1-ին, 4-րդ, 7-րդ (ՀՀ ոստիկանության կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին), 10-12-րդ մասերով» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Ընդ որում, սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 10-11-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է 43.1-ին հոդվածի 3-րդ, ~~3.1-ին,~~ 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների մասով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 242-րդ հոդվածում «օրենսգրքի» բառից հետո լրացնել «43.2-րդ հոդվածով,» բառերով:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել նոր՝ 43.2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 43.2. Աղբավայրի մոնիթորինգի իրականացման կարգը խախտելը**

1. Աղբավայրը շահագործողների կողմից աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում անհատ ձեռնարկատերերի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ՝ ~~լրացվող 43.2-րդ~~ օրենքի 5-րդ հոդվածի հոդվածի, որն ուժի մեջ է մտնելու 2024 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-261-11.05.2022-ՏՏԳՇ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Թափոնների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդված	1-ին հոդվածով Օրենքի 4-րդ հոդվածում կատարվող լրացմամբ «թափոնների հեռացման վայրեր» հասկացությունը սահմանելիս առաջարկվում է վերանայել «հատուկ նախատեսված վայրեր» ձևակերպումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 4-րդ հոդվածի համապատասխան պարբերությամբ տրված է «հատուկ հատկացված տեղեր» հասկացությունը, ինչը ենթադրում է թափոնների գործածության համար	***Ընդունվել է*** Կատարվել է համապատասխան փոփոխություն	***Ընդունվել է***

			օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված վայրերը, իսկ՝ գործածության շրջանակում են նաև թափոնների վնասազերծումը, ոչնչացումը և տեղադրումը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»: Ամփոփելով վերոշարադրյալը՝ առաջարկվում է այն դեպքում, եթե «հատուկ նախատեսված վայրեր» եզրույթի էությունը հանգում է Օրենքով սահմանված «հատուկ հատկացված տեղերի» բովանդակությանը՝ ապա՝ միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն եզրույթը, հակառակ դեպքում՝ բացահայտել «հատուկ նախատեսված վայրերի» շրջանակը՝ նորմի հստակությունն ապահովելու, ինչպես նաև իրավական շփոթից խուսափելու նպատակներով:		
2	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝ 1) «ժ)» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «ժ) աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգի սահմանումը.». 2) լրացնել նոր կետով հետևյալ բովանդակությամբ՝ «ժա) օրենքով նախատեսված այլ լիազորություններ»:»	***Ընդունվել է***	***Ընդունվել է***

3	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառու- թյունը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	***Ընդունվել է*** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	***Ընդունվել է***
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդված	Առաջարկվում է պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, այն է՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	***Ընդունվել է***
2.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդվածի 4-րդ կետ,	Առաջարկվում 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «3-րդ մասի 3-րդ կետում «2-րդ» բառերը փոխարինել «3-րդ» բառերով»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	***Ընդունվել է***
3.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդվածի 5-րդ կետ	Հաշվի առնելով 4-րդ կետի խմբագրությունը՝ 5-րդ կետով առաջարվող լրացման անհրաժեշտու- թյունը բացակայում է, առաջարկում ենք հանել 5-րդ կետը, որի արդյունքում կետերի համարակալումը փոխվել է:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	***Ընդունվել է***

4.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող նախադասությունից անհրաժեշտ է հանել 43.1-րդ հոդվածի 3.1-րդ մասին կատարված հղումը՝ նկատի ունենալով, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածում առկա չէ նման համարակալմամբ մաս:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
5.	***ՀՀ կառավարություն***	6-րդ հոդված	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը՝ առաջարկվում է Նախագծի 6-րդ հոդվածով բացառություն նախա- տեսող մասում համապատասխան կարգավորումներին հղումը կատարել հստակ և ուղղակի կերպով՝ հղում կատարել Նախագծի 5-րդ հոդվածին:	***Ընդունվել է*** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**